

Գ Ր Ա Խ Ո Ս Ո Ւ Թ Յ ՈՒ Ն

«ԲՆՆՈՒԹԻՒՆ 1941-ի ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅՈՆ ՀԱՅՈՑ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻՐԿԻՈՒ „ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹՅԱՆ“»

ՇԱՎԱՐԾ ՎԱՐԴԱՊԵՏ ԿՈՒՅՈՒՄՃՅԱՆ

(Բնյուր, 1955 թ., ապ. Կ. Տոնիկյան, 127 էջ)


Դամասկոսի թեմի Կաթողիկոսական փոխանորդ և ընտրյալ առաջնորդ հոգեւոր՝ Տ. Շավարշ վարդապետ Գույումճյանը, այս տարի մարտ ամսին, լույս է ընծայել մի հետաքրքիր երկասիրություն՝ «Բննութիւն 1941-ի Կաթողիկոսության Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ Կանոնադրության» խորագրի տակ:

Հոգեւոր հեղինակի կանոնադրական այդ կուռ երկասիրությունը իրապես ազգագույն, լուրջ ու առողջ դատումի արդյունք է, որը իրավագիտական և կանոնադրական տեսակետից քննության է առնում Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսական այսպես կոչված 1941 թվականի «Հունվարյան կանոնադրությունը»:

Երջանկահիշատակ և հոգեւոր Գարեգին Վեհի մահից հետո Կիլիկյան Աթոռը դեռևս թափուր է: 1954 թվականի նոյեմբերին նշանակված ցանկալի ընտրությունը տեղի չունեցավ մի շարք ներքին և արտաքին արգելիչ պատճառների հետևանքով, և Հայրապետական Աթոռի վրայից չի վերացել սգի շղարշը:

Հոգեւոր Տ. Շավարշ վարդապետը, ահա, շատ ձեռնհասորեն և հանգամանորեն քննության է առնում 1941 թվականի «Կանոնադրությունը» և գտնում է, որ այն «Կանոն ըլլալի ավելի կարկտան մըն է կանոնադրության վրա փակցված Սահմանադրությունով (էջ 105), ուրացումն ու ժխտումը սահմանադրության: 1941 թվականի «Կանոնադրությունը» արգարություն չէ ըրած Հայ Եկեղեցւոյ երկհազարամյա կանոնադրության, անոր կարգաց և կանոնաց, ավանդության... իրավանց, նվիրապետության և եկեղեցական պատմության» (էջ 122):

Հոգեւոր հեղինակի այս աշխատությունը ցույց է տալիս Տ. Շավարշ վարդապետի գովելի նախանձախնդրությունը մեր ազգային-եկեղեցական արժեքների նկատմամբ, նրա խորը հարգանքն ու նվիրվածությունը՝ «Օրենքի, կարգի, կանոնի հանդեպ բոլորանվեր պատկառանքը հայ ժողովրդի և նրա Ազգային Եկեղեցւոյ հանդեպ նրա որդիական սերը» (էջ 10):



Շավարշ վարդապետը երուսաղեմի Ս. Հակոբյանց միաբանության երիտասարդ ու զարգացած միաբաններից մեկն է, որը երուսաղեմում աշակերտել է հոգևոր Տ. Նղիշ Դուրյան Պատրիարքին, ապա հետևել է Լոնդոնի համալսարանի աստվածաբանական դասընթացներին, իսկ հուսկ ուրեմն հետևելով իրավաբանության՝ Երուսաղեմի իրավաբանական վարժարանում, անգամ է ընտրվել Պաղեստինի օրենսգիտական կաճախի բրպես ձեռնհաս, կարող և աչքի ընկնող վկայալ և արտոնյալ իրավաբան:

Շավարշ վարդապետը, որպես մեր հայրենասեր և հավատավոր հոգևորականներից մեկը, իր համալսարանական կրթությամբ, լազմակողմանի զարգացած իրավաբանական պատրաստությամբ, լեզվական բարձր կույտությամբ (նա անթերի տիրապետում է մի շարք եվրոպական և արևելյան լեզուների) իր ուրույն տեղն է գրավում մեր Սփյուռքի հոգևորականության շարքերում:

Ինչի Ամենայն Հայոց Բնդհանրական Հայրապետի, լինի մեր մյուս նվիրապետական Աթոռների գահակալների ընտրությունները, դրանք միշտ էլ հանդիսացել են պատմական իրադարձություններ մեր ազգային-եկեղեցական կյանքում: Կաթողիկոսության ընտրությունների առթիվ միշտ էլ մղվել է ընտրապայքար. և այս անգամ էլ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսության ընտրությունը, որը հուզվում է «այնքան հրատապ կերպով, արժանի է խոր ուշադրության, անկեղծ մատուցման» (էջ 9), որովհետև «այժմեականություն վայելող այդ խնդիրը, ընտրելի անձն, անոր պաշտոնին վեր կենթադրել լայն ծավալով և խոր դատողությամբ գոյավիճակ մը հայ իրականության մեջ» (էջ 10) և այն «կենսականա ցանկով մյ հարակից հարցերու, որոնք նույնքան կենսական են ազգային և եկեղեցական տեսակետներով» (էջ 9):

Համաձայն ենք հոգեւոր հեղինակի հետ, որ այսօր մանավանդ, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսական

ընտրությունը լույս տեղական հարց չէ, Կիլիկյան միաբանությունն, Կիլիկյան թեմերի և ժողովրդի մասնակի հարցը չէ, այլ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու, Մայր Հայրենիքի և բովանդակ հայությունը հետաքրքրող հարց, որից եկախում ունի, հուսկ ուրեմն, սա օրենքու հայության համար իբր պատմության փիլիսոփայության վճիռ ներկայացող նշանաբան՝ ժողովրդական միության և եկեղեցական միասնականությունը (ընդգծումը մերն է։— Ա. Լ.) (էջ 9)։

Շավարշ վարդապետի այս հետաքրքիր և բովանդակալից գիրքն ունի 12 ենթաբաժիններ։ Ներածական բաժնում (էջ 9—22) հեղինակը ամփոփ կերպով համադրում է կաթողիկոսական ընտրապալարի առթիվ Սփյուռքի հայ մամուլում՝ հատկապես Լիբանանի և Սիրիայի հայ մամուլում՝ հայտնված տեսակետները, թերևս ու դեմ կարծիքները։ «Միապետական ձգտումներ և անկշիռ փառասիրելի հավակնություններ տեղ չունին կաթողիկոսական ընտրության հարցի մեջ»,—գրում է բարձրապատիվ Ս. Խաղ արքեպիսկոպոսը։ Որքան իրապես, իմաստուն ու շրջահայաց է հնչում Աթոռի առաջին թեմական, հայրենասեր հոգևորականի զգաստացնող, հայրական խոսքը, ուղղված իր ընտրող հոտին, «Համագործակցության միակ գետինը՝ որ կմնա Կաթողիկոսությանը, զայն ևս չդարձնենք հատվածամուկական կրկեսի մը, որուն շարիքները պիտի ըլլան կործանարար թե՛ հոգևորական և թե՛ նյութական, թե՛ ներքին և թե՛ արտաքին մարզերու մեջ... Անիմաստ պայքարով միանվանող լիստովներ մեր երկրորդ հայրենիքներու անդորրությունը քաղաքական սա շատ դժնդակ ու անորոշ օրերուն, երբ ընկի տարրերն ալելի մեզի կիյնա ըլլալ հեռատես ու շրջահայաց» (էջ 11)։

Կիլիկյան Աթոռի և ամբողջ հայ եկեղեցականության երիցագույն ներկայացուցիչ գերաշնորհ Ս. Փառեն եպիսկոպոս Մեղրոյանը, Բեյրութի առաջադիմական «Զարթոնք» օրաթերթում, վեց հոգևածնների մեջ վերլուծելով 1941 թվականի «Կիլիկիո Կաթողիկոսության ձևավորման կանոնագրության սահմանադրական և իրավաբանական արժեքը, գտնում է, որ հիշյալ կանոնագրությունը խմբագրված լինելով ոչ իրավասու պատգամավորական ժողովի կողմից և վավերացված լինելով լույս Ս. Նդիշ արքեպիսկոպոս Կարոյանի կողմից, «ըստ տառին և ըստ ոգվուն» տարբերելով 1863 թվականի Ազգային Սահմանադրությունից, որով Սփյուռքում երաշխավորվում է հայ համայնքների իրավական գոյավիճակը (status quo), «անհրաժեշտ, անարդար, անվավեր և չնդլալ» է համարում 1941 թվականի կաթողիկոսական ընտրական կանոնագրությունը։

Հայ մամուլում գրված խմբագրականներից, հոգևածնաշարքերից և նոտերից հետո, ահա հոգեշնորհ Ս. Շավարշ վարդապետը, իր հերթին պատմական իրողական (de facto) և իրավաբանական (de jure) տեսակետներից, քննության է առնում 1941 թվականի հունվարյան կանոնագրությունը, «ըստ ձևի» (էջ 76—95) և «ըստ խորքի» (էջ 95—122) և գտնում է, որ այդ կանոնագրությունը «Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսական Աթոռը կանոնավորելու փորձ մը կրնա ըլլալ, սակայն զուրկ է որևէ օրինավորութենա» (էջ 67), որով

հետև 1941 թվականի պատգամավորական ժողովը օրենսդրական իշխանություն չունի, օրենսդիր հանձնախումբ ընտրելու իրավունք չունի, կաթողիկոսական կանոնագրություն խմբագրելու իրավասու չէ, և հետևաբար նա՝ պատգամավորական ժողովը՝ կաթողիկոսական կանոնագրությունը վավերացնելու իրավասու չէ, և զուրկ լինելով կաթողիկոսական և պետական ճանաչումից, «անվավեր է հաշվարկ օրինաց» (էջ 95)։

Շավարշ վարդապետը ձևափոխություն և իրավաբանական անառարկելի փաստարկումներով, «ըստ ձևի» քննության առնելով 1941 թվականի կանոնագրությունը, այն համարում է անվավեր և զուրկ որևէ օրինական, կանոնագրական հիմքից։ Ապա «ըստ խորքի» քննարկելով կանոնագրության զանազան տրամադրություններն, առանձին հոգևածներն և հուսկ ուրեմն ամբողջությունն «ըստ տառին և ըստ ոգվուն», համարում է «հակասահմանադրական, հակակրոնական և հակապատմական» (էջ 96)։

1863 թվականին Կոնստանդնուպոլսում Հայոց Պատրիարքարանի համար խմբագրված Ազգային Սահմանագրության մեջ որևէ կանոնական հոգևած չկա Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության մասին։ Բայց, ինչպես շատ ճիշտ կերպով նշում է հոգեշնորհ Շավարշ վարդապետը, «Սահմանագրական հիմնական սկզբունքներով արտահայտված ոգին, սակայն, կմնա նույնը Հայ Ազգի երեքմե Օսմանյան և այժմ Մերձավոր Արևելքի մեկն ալելի պետությանց հպատակ Հայ Ազգի բոլոր զավակաց համար, ուր որ ի զորու ըլլա Հայ Ազգային Սահմանագրությունը»։

Կիլիկիո Հայրապետական Աթոռը երկար ժամանակ և մինչև այսօր էլ կառավարվել է «առանց որոշ կանոնագրության, ուղեցույց ունենալով ավանդությունը, սովորությունը, ընկալյալ կարգի ու սարքի և հայրապետական խիղճը», բայց այդ չի նշանակում, գրում է հոգեշնորհ հեղինակը, որ այսօր «մեր աչքերը փակենք սահմանադրական զարգացման կարգ մը ամենն ակներև պատմական իրողությանց դեմ» (էջ 59)։

Կիլիկիո Հայրապետական Աթոռը մնալուն և օրինական կանոնագրությամբ օժտելու հարցը կարևոր, հրատապ ու պատասխանատու հարց է։ Ինչպես շատերը, հոգեշնորհ հեղինակն էլ համաձայն է «Կիլիկիո Աթոռը կանոնագրությամբ մը կառավարելու գաղափարին... և այդ կանոնագրության կազմությունը անհրաժեշտություն մը, desiderata մըն է, մասնավոր, ուր, սակայն, sine qua non պայման նկատվի սահմանագրական կարգ ու սարքի և անոր ոգվուն զուգընթաց արդարությունը ընել Աթոռին և աթոռակալի դիրքին և վարկին, նվիրապետական և հայրապետական կարգին և իրավանց, ազգային-եկեղեցական ավանդությանց և սովորությանց, կանոնագրական և իրավագիտական կարգաց և կանոնաց, ինչպես որ որոշապես հիշված է նույնիսկ Սահմանագրության հիմնական սկզբունց մեջ. «Հայաստանյայց Եկեղեցվո դավանությունն ու ավանդությունը անարատ պահեն»։

Ինչպես հայտնի է, Սփյուռքում հայ համայնքների իրավական գոյավիճակը երաշխավորված է մի շարք

միջազգային դաշինքներով և պետական օրենքներով, Հայ Ազգային Սահմանադրության հիման վրա: Կրթա-նանում և Սիրիայում հայ համայնքների գոյավիճակը երաշխավորված է Լիբանանի 1926-ի Սահմանադրու-թյամբ և Սիրիայի 1928 թվականի Սահմանադրու-թյամբ:

Նույնիսկ 1935 թվականին Սիրիայում հրատարակ-ված է Հայ Ազգային սահմանադրությունը: Բայց Հայ Ազգային այդ Սահմանադրության մեջ, մի շարք լրա-ցումներ կատարելով չի կարելի նոր կանոնադրություն կազմել Մեծի Տանն Կիլիկիո Աթոռին համար: 1941 թվականին Կաթողիկոսական տեղապահ Նիկիյե արքե-պիսկոպոս Կարոյանի օրով գումարված կաթողիկոսա-կան ընտրության պատգամավորական ժողովը կազմե-լով «Կանոնադրություն Կաթողիկոսության Հայոց Կի-լիկիո» և Ազգային Սահմանադրության հիման վրա կաթողիկոսի ընտրության նոր կանոններ մշակելով, և Կիլիկիո Կաթողիկոսությունը «Կոստանդնուպոլսո Պա-րիսարկոսիան աստիճանին իջեցուցած» լինելով, «Երա-վագիտական, կանոնադրական և ամեն տեսակետե-րով սխալ» է գործել պատգամավորական ժողովը, մինչդեռ, եղբայրացում է Շավարշ վարդապետը (էջ 97), «Եկեղեցավոր որ մարդիկ Հայ Եկեղեցվո օրու-թյան հանդեպ բարենախանձ ոգով պատկառ կենային, պահպանեին հայրապետական գոյավիճակը, և դայն պահելին դիրքին և դերին մեջ, կանոնադրություն մը մշակելով Ս. Էջմիածնա Հայրապետության գոյավի-ճակին համաձայն»:

Կարելի չէ այս սուղ էջերի մեջ կանգ առնել Շավարշ վարդապետի այս հույժ արժեքավոր և բովանդակալից գրքի ամեն մի գլխի վրա:

Շավարշ վարդապետի աղնիվ ձգտումն է եղել «Հա-մադրական ու վերլուծական» բաղդատությամբ, ցույց տալ 1863 թվականի Հայ Ազգային Սահմանադրու-թյան և 1941 թվականի Կանոնադրության տարբերու-թյունը, և հասնել այն եղբայրացության, որ «վերջինս ուրացումն է և ժխտումը առաջնուն»:

Այս գիրքը խմբագրելիս հոգեշնորհ հեղինակը առաջ-նորդվել է Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու նկատմամբ սիրով և գովելի նախանձախնդրությամբ, հավատարիմ մնալով մեր Ազգային Եկեղեցու իրավացի, սովորություններին, առաքելահիմն ու հայրապետահաս-տատ կարգ ու կանոնին, և մեր Եկեղեցու ժողովրդա-կան ոգուն:

Բովանդակ հայության սրտագին բաղձանքն է ար-տահայտում Շավարշ վարդապետը գրելով. «Ենց հա-րյուրամյա ստրկության և կենդանվույն մարտիրոսաց-ման շրջանն ենք, տեղական պետությանց բարեխնամ և խաղաղասեր հովանիին ներքև, ազգային և կրոնա-

կան աճման և բարգավաճման սա օրերուն, որքա՞ն պի-տի փափագե՞ինք Կիլիկյան Աթոռը տեսնել իր արժանի բարձրության վրա, կազմակերպական, կրթական, կրո-նական և հոգևոր գագաթնակետին վրա, մեր պահպա-նողական պատվանդանին վրա աշտանակած, մեր որ-դիական անխառն սիրով և զոհարերության ոգիով շե-ր-շապատված...»:

Այսօր բովանդակ հայ ժողովրդի համար, Հայաս-տանյայց Առաքելական Եկեղեցու համար, շկան և շեն կարող լինել ավելի բարձր շանք քան Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու ընդհանրությամբ և միասնակա-նությամբ շանքը, քան հայ ժողովրդի և նրա պանծալի Հայրենիքի՝ Սովետական Հայաստանի գերագույն շա-հերը: Ով այդպես չի մտածում և չի գործում, այնպի-սին առատ ջուր է մատակարարում հայ ժողովրդի և Հայ Եկեղեցու թշնամիների ջրաղացին:

Ահա այն հետևությունը, ինչ ընթերցողն ստանում է կարգալույց հետո հոգեշնորհ Շավարշ վարդապետի այս ազգօգուտ, լուրջ և բովանդակալից գիրքը:

Շավարշ վարդապետը գովելի և օրինակելի աշխա-տանք է կատարել՝ հայ հավատացյալ ընթերցողներին ներկայացնելով զուտ իրավաբանական արժեք ներ-կայացնող մի աշխատություն, որը թելադրված է օրի-նականության ոգով և ժողովրդական սկզբունքներով:

Շավարշ վարդապետը իր այս գրքով զբաղվում է հայ ազգային եկեղեցական իրավունքի մի՞ թեև շատ կարևոր հարցով՝ Հայ ազգային-եկեղեցական իրավուն-քում կան շատ հարցեր, որոնք կարող են լուսաբանու-թյան, գիտական մեթոդական և մեկնություն Հայաս-տանյայց Ազգային Եկեղեցական իրավունքը հետա-քրքիր է նաև նրանով, որ նա մի մասնիկն է իրա-վունքի համաշխարհային պատմության: Հայ իրավունքը մեզ չի հասել ինչպես հռոմեական Corpus juris -ը կամ բարեկոնական օրենքների Համաժողովրդի ժողովածուն: Ահա թե ինչո՞ւ հայ ազգային-եկեղեցական իրավունքի ուսումնասիրությունը ունի ո՞չ միայն իրավաբանական, այլ նաև պատմական արժեք: Հայ ազգային-եկեղեցա-կան իրավունքի պատմությամբ շատերն են զբաղվել, թե՛ հայ թե՛ օտար գիտնականներից, բայց մինչև այժմ գիտականորեն և ամբողջական ձևով մշակված չէ հայ ազգային-եկեղեցական իրավունքի պատմությունը, մեկնաբանությունն ու ժողովրդականացումը:

Շավարշ վարդապետը ունի բոլոր տվյալները՝ զբաղվելու հայ ազգային-եկեղեցական իրավունքի վե-րաբերյալ մի շարք կարևոր հարցերի լուսաբանու-թյամբ: Առաջին իրավաբանական այդ գիրքը իրա-վունք է տալիս մեզ հոգեշնորհ հեղինակից սպասե-լու ավելի մնալուն և արժեքավոր երկեր հայ իրավուն-քի պատմության և մեկնության վերաբերյալ:

Ա. Հ.

